

մի թողուր որ անխրատ վարժի , որ մեղաց ժանդն 'ի վերայ չնստի և չապականէ : Տղայի միտքն որպէս զկակուղ մոմէ . զբարի խրատն և զիմաստութեան ուսումն դիր 'ի վերայ մատնեհար , որ այլ պիղծ և վատթար իլք չկերպարանի 'ի միտքն : Տղայի միտքն յստակ ակն է աղըեր ջրոյ , մի թողուր ճապաղի կամ ցամաքի , և դառն և աղտաղտուկ և օտար ջուր 'ի ներքս մտանէ և խառնեալ աղտորի . այլ զոր օրինակ զջուրն յակնէն եթէ ոք կամի 'ի պէտս տանելըմպելս և կամ զանդաստանս և զայդիս ջրելս , ագուգով և փողրակով պնդէ և հաւաքէ զի մի ճապաղի և կամ հեղեղաքեր օտար ջուր 'ի ներքս խառնի , այսպէս և ըզմիտս տղային որպէս փողրակով յամենայն կողմանց պնդել պիտի ուսմամբ աստուածային օրինացն , իմաստութեամբ հանձարոյ և աստուածագշտութեան խրատովն , զի մի ելեալ միտքն ճապաղի ընդ զգայարաննն 'ի տես աչացն և 'ի լսել ականջացն , յորկորամոլութիւն կամ յարբեցութիւն և կամ յայլ գործս վնասու , և կամ օտար և ժանդ և դառն ջրոյ նըման գործք պղծութեան կամ ձայնք և երգս գուսանական և խօսք և բանք աղտեղի մտեալ ընդ ականջն , կամ գարշ և անպատեհ տեսութիւն ընդ աշն , և խառնեալ պղտորեն զյատակ և զսուրք միտսն , և այնպէս անպտուղ առնեն : Եւ այսքան յազագս սնընդեան և խրատու և ուսման տղայոց զոր և աստուածային առաքեալն Պօզոս պատուիրէ . Հարք , սիրով խրատեցէք զորդիս ձեր և սնուցէք սրբութեամբ և երկիւղիւն Եստուծոյ „ :

ՅՈՎՅ . ԵՐԶՆԿԱՑԻ


## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՎԵԿՈՒԹԻՒՆ

ՀԻ ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղեգուանդրէոյ ժաբոս :

ՓԱՐՈՍՆԵՐՈՒ վրայ ուրիշ անգամ ալհամառօտ տեղեկութիւն մը դրեր էինք Բազմավիպիս մէջ ' . Հոս ամենէն առաջինն ու անուանին քիչ մը աւելի կ'ուղենք ստորագրել , այսինքն Եղեքսանդրիոյ փարոսը՝ որ աշխարհիս եօթը հրաշալեաց մէկը սեպուածէր ատենով :

Եղեքսանդրիա քաղաքին հիմնարկութիւնը Վրիստոսէ 331 տարի առաջ եղած է , և հիմնադիրն է մեծն Եղեքսանդր մակեդոնացի , որ իրեն բարակամտութեամբը գուշակեր էր թէ որչափ կրնայ ծաղկիլ ատենով անքաղաքը վաճառականութեան մէջ այնպիսի յարմար դիրք ունենալովը : Եղեքսանդրի մեռնելէն ետե իր ընդարձակ տերութիւնը գլխաւոր զօրապետներուն մէջ բաժնուեցաւ . ասոնցմէ Պտղոմէսս Ա Պ ագոսի որդին Եղիպտոսի տիրեց , ու քառասուն տարի թագաւորելէն ետքը՝ աթոռը տրւաւ իր որդւոյն Պտղոմէսի Բ , որ իր քրոջը վրայ մեծ սէր ունենալուն համար Փիլադեղփոս այսինքն Եղբայրասէր ըսուեցաւ : Եսոնք հայր ու որդի մեծ ջանքով առաջ տարին Եղիպտոսի մէջ չունաց լեզուն , գիտութիւներն ու արուեստները . միանգամայն վաճառականութիւնն ալ շատ ծաղկեցուցին , գիտնալով որ ժողովրդոց հարստութեան աղքիւրն ան է . ուստի Եղեքսանդրիա քաղաքը մեծցընելէն ու զարդարելէն զատ՝ Պտղոմէսս Բ շինեց անոր նաւահանգստին բերանընաւե Փարոս ըսուած մեծ ու փառաւոր լապտերը : Երսեն թէ ասլապտերին շինութեանը համար ու-



### Աշտառնորմիոյ ժարութ:

Թըհարիւր տաղանդի ծախք եղեր է, որ գրեթէ հինգ միլիոն ֆրանք կ'ընէ: Ի՞ս լապտերը աշտարակի ձևով չենք մըն էր՝ բարձր ժայռի մը վրայ Փարաս անունով պղտիկ կղզիի մը մէջ չինած, որ Ի՞զեքսանդրիայէն մէկ մղոն հեռու էր. աշտարակին բարձրութիւնը 450 ոտնաչափ էր, ու ինչուան հարիւր մղոն տեղ լցու կուտար. շինուածքն ալ կարգ կարգ էր իրարու վրայ, վարի կարգերը լայն՝ վրայինները իրարմէ նեղ. վերի ծայրն ալ կրակ կամ ջահեր կը վառեին որ նաւերուն լցու ըլլայ գիշերները: Ա արի յարկը վեցանկիւնի էր, աս վեցանկիւնիին ալ իրեք կողմերը գոգածե, մէկալիրեքին երկուքը կորնթարդ՝ մէկը գոգածե: Ճրկրորդ ու երրորդ յարկերն ալնոյն ձեն ունեին, չորրորդը քառակուսի էր, ու չորս կողմը մէյմէկ կլոր

աշտարակներ ուներ, հինգերորդը մեծ աշտարակ մըն էր՝ կլոր ձեռվ. բոլոր շինուածքը կոկած քարէ էր, ու փառաւոր սանդուխով մը ինչուան վերի ծայրը կ'ելլրցուէր: Ի՞ս աշտարակը ոչ միայն նաւերուն լցու տալու համար էր, հապանակ բերդ մըն էր՝ նաւահանգիստը պաշտպանելու. ուստի վարի կողմը կլոր պարըսպով մըն ալ պատած էր:

Ո րան այսպիսի արձանագրութիւն մըն ալ կար. Ա ստրատոս Գնդութագիւթավանեսթ ՈՐԴԻ, ԴԻՑՆ ՊԱՀ-ՊԱՆԱՑ ՎԱՍՆ ՆԱԽՈՐԴԱՑ: Ի՞ս Աստրատոսը ան ատենի հռչակաւոր ճարտարապետներէն մէկն է եղեր. կ'ըսեն թէ ասիկայ շենքը լմբնցընելէն ետքը աս արձանագրութիւնն ալդրեր ու ետքը ծեփեր է, ան ծեփին վրայ Պաղոմէոսի անունով ուրիշ արձանա-

զիր մը դրեր է . քանի մը տարիէն ծեփը թափելով՝ տակի արձանագիրը դուրս ելեր է :

Հոս դրուած պատկերին մէջ լցեք- սանդրիոյ փարոսին հին ստորագրու- թեանը յարմար ձեւացած տեսքը կ'ե- րևնայ . իսկ հիմա հարիւրաւոր տա- իներէ ՚ի վեր ան աշտարակին հետքն ալք մնացած . ինչուան Փարոս կղզին ալ հիմա ցամաքին հետ միացած է՝ ՚լեզոս գետին բերած ու լեցուցած հողերովը :

### ԱԶԴԱՑԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

#### ՅԱՀԱՆՆԵՍ ԱՊՐԻԱԼ-ԱԳ ԱՐԴԱՊԵԴ :

ԻՆՍԱՑՈՒՐ մեծ հանձար՝ կրթու- թեամբ և երկար ուսմամբ կրկին մեծ- յած և զօրացած, բարակամիտ ըմբըռ- նումն և վարպետ բացատրութիւն, լեզու արուեստաւոր՝ բայց յստակ և հայկաբան . արտաքին և աստուա- ծային գիտութեանց հմտութիւն, քա- ջախոհ գատողութիւն, վսեմ և ան- դրդիու ոգի, անխօնջ հետաքնին և սիրող ստուգութեան, պատկառելի ծանրութեանը հետ զուարձախառն ընտանութիւն, միանգամայն և մէկ զարմանալի խորհրդաւոր կերպ մը՝ ո- րով կարծես թէ ինքզինքը կը քօղար- կէ հասարակնայուածքներէն, ասոնք են մեր մեծանուն Քովհաննէս Ապր- կաւագ վարդապետին յատուկ թնու- թիւնը, բարքը, ձիրքը, որ ախորժե- լի պարտք մը կը զնեն մեր վրայ որ ծանօթութիւն մը տանք իր վրայօք իրեն համազգեացը . վասն զի աս ձիր- քերովն է որ ինքը իր գտնուած ժա- մանակին և դիպուածոցը մէջ զինքը հանցողներուն զարմանք բերելէն զատ, իմաստութեամբը թողած յի- շատակարաններովը անմահ է այսօր ալ, և անմահ պիտի մնայ միշտ մեր դրականութեանը և ընդհանուր ի- մաստնոց կարգին մէջ, և իրեն հաւա- սար անձինք գտնելը միշտ աշխատալի

և դժար գործ պիտի ըլլայ մեզի : Ո՞եր գրականութեան մէջ յայտ- նի է բանասիրաց որ երկու նշանաւոր դար ունեցեր ենք, մէկ մը ՚իշիստո- սի հինգերորդ դարը՝ որ է ՚իշարդման- չաց ոսկեգրիչ ժամանակը, մէկ մ'ալ երկոտասաններորդ դարը՝ ուր մէկ դըպ- րոցէ ելան սուրբն ՚լերսէս ՚նոր- հալի և իր եղբայրը ՚իրիկոր վկայա- սէր, ՚արդիս ՚նորհալի և ՚իգնա- տիոս վարդապետ, և իրենց մերձա- ւորները ՚լերսէս ՚ամբըռնացի, ՚իրի- գոր ՚զզայ և այն, որոնք նորոգեցին ոսկեղէն գրիչները, և ՚նազզարդ մը- տաց ծննդոցը վրայ նոր ծաղկափթիթ- շնորհք մը բերին, այսինքն յստակա- գոյն բացատրութիւն մը որ աւելի յարմար է նոր դարերուս : ՚արկա- ւագ վարդապետ ան դպրոցէն չէր, բայց կրնայ հայր ըսուիլ անոր, որով- հետեւ քան զայն քիչ մը առաջ նոյն շնորհքով վայլեցաւ՝ հանդերձ հին վսեմութեամբ, և իր վարպետ զուր- ցուածքովը եղաւ եղական և աննման մատենագիր մը : ՚ետասաններորդ դարուն կիսէն ինչուան ԺԲ դարուն երեսներորդ տարին քշեց իր կեանքը, ըսել է թէ իր խոր ծերութեան ա- տենը վերոյիշելալ վարդապետները գեռ երիտասարդ ու միջահասակ էին, և գրեթէ ինքը գրիչը թողլու ատեն՝ անոնք ձեռք կ'առնեին : ՚ո ատեն- ներս քաղաքական հին ՚այաստանն ալ նորոգուելու վրայ էր . ՚ագրատու- նեաց տերութիւնը նոր վերջացած, ՚այսոց մէկ մեծ մասը իր բնական աշ- խարհէն ելած՝ ուրիշ աշխարհքներ գաղթականներ կը հաստատէր . ո- մանք գեռ իրենց մեծ տէրութեանը կտորներուն վրայ կուուըտելով՝ ան հին աշխարհքին ամուլը կողմերը որը ապաւինած որը բռնացած կեցեր էին, աստղաբաշխից կարծած՝ մեծ մոլորա- կի կտոր մանր մոլորակաց պէս . ո- մանք ալ ասդիէն անդիէն ՚մէկտեղ եկած մէկ ամբողջ ջահ մը վառել կը ջանային, այսինքն մեր ՚իութիւննեան և ՚պահլաւեան իշխանները՝ ՚իմիկիոյ